## ՄԱՆԿԱԿԱՆ «ԶԱՐԹԻՐ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Արդեն մի քանի տարի է, ինչ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի նախաձեռնությամբ հրատարակվում է «Զարթիր» պարբերաթերթը:

«Մենք Հայաստան կերթանք...», այսպես է սկսվում մանկական «Զարթիր» պարբերաթերթի նոր համարը, որը լույս է տեսել սույն թվականի հունիս ամսին:

Պարբերաթերթի էջերը (24) պարունակում են Միացյալ Նահանգների դպրոցականների և ուսուցիչների բազմապան տպավորությունները Հայաստան այցելության մասին:

Թերթիկի առաջին էջում Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը մաղթանքով դիմում է հայ մանուկներին՝ ասելով. «Դուք կմեկնիք տեսնելու համար Մայր Հայրենիք՝ Հայաստանը: Կուզեմ որ լավագույնս օգտագործեք այս բացառիկ առիթը: Դիտեցեք ձեր շուրջը: Պիտի տեսնեք այնտեղ ապրող ձեր եղբայրներուն հրաշալի իրագործումները: Բազմաթիվ պատճառներ պիտի ունենաք հպարտ ըլլալու, որ մեկ մասնիկն եք տասհազարամյա պատմություն և մշակույթ ունեցող ազգի մը: Երբ ոտք դնեք Հայրենի հողին վրա և տեսնեք վեհանիստ Արարատը՝ այն ատեն միայն պիտի ըմբռնեք թե ի՞նչ ըսել է Հայ ըլլալ...»:

Ապա վերեղված է հայ դպրոցների կրթական կենտրոնի տնօրեն օր. Սիլվա Տեր-Ստեփանյանի խոսքը. «Հայրենիքի ձեր եղբայրներն ու քույրերը գիտեն, թե կրնաք լավ անգլերեն խոսիլ: Բայց դուք անոնց ցույց պիտի տաք, թե գիտեք նաև խոսիլ լավ հայերեն: Անոնք կբնակին հոն, կտքնին և մեծ իրագործումներ երևան կբերեն, որպեսզի յուրաքանչյուրդ կարենաք հպարտանքով ըսել. երկիր մը ունիմ՝ Հայաստան անուն»:

Հիրավի անչափ մեծ է ուրախությունը Հայաստան այցելած ամերիկահայ այս պատանիների ու աղջիկների, որոնք Մայր Հայաստանի մասին ամբողջական և իրական պատկերացում ունեցան: Պարբերաթերթը հորդում է ջերմ զգացումներով և սիրալեղ արտահայտություններով՝ Մայր Հայրենիքի ամեն մի հաջողության, հայրենի բնության գողտրիկ մի անկյան և հայրենակիցների հետ սրտահույզ հանդիպումների մասին: Ուծացման դեմ պայքարի համար առավել կարևոր է արդի Հայաստանի գիտակցված ճանաչումը՝ որպես հպարտության աղբյուր սփյուռքահայության ազգային դիմագծի պահպանման: Ուրախալի է, որ Հայրենիք այցելությունների կազմակերպման գործը անձնապես հովանավորում է ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը:

ՍԱՄՎԵԼ ՍՐԿ. ԿՃՈՅԱՆ